# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015 թվականի N 17 –Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով .

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

**Հիմնական օբյեկտների համար**

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ (կիրառվում է 0.5 գործակից) ---------- 7500 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -15000 դրամ,
բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,
գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000 դրամ,
դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ---------- 1000 դրամ
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝--------- 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ----------1500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել ----------2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝5000դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝---------5000դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար ----------100 դրամ՝1քառ.մ համար

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել ----------150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝----------45 000 դրամ.

ա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝--3000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝-300դ

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝----------30 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ ----------50 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ ----------300 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ ----------600 000դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ ----------300 000դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ ----------100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ ----------2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ ----------500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ ----------700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ ----------1 000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝100000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել....5000դրամ:

10.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառված է 0.5 գործակցով:

Տեղական վճարներ՝

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, «շինարարության ավարտական ակտի ձեւակերպման համար, ինչպես նաեւ շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝------- 5000 դրամ

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝--------1000դրամ

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝-- 1000 դրամ:

14. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական ----------10դրամ:

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորհանարդ մետր աղբի համար -----1000 դրամ կամ

բ/ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար --- 3000 դրամ

3).շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել ----------500 դրամ:

Կողմ - 6 Դեմ -0 Զեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
*հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015 թվականի N 18 –Ն

### ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Բուրաստան համայնքի գյուղապետարանի աշխատակազմում հավելավճարի կիրառման հետևյալ կարգը.

Բուրաստանի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենեցող համայնքային ծառայողի համար հավելավճարը սահմանել նրա պաշտոնային դրույքաչափի 5 % - ի չափով :

Կողմ - 6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 04200443

Հավելված 1
Բուրաստան համայնքի ավագանու
10. 12. 2015թ. թիվ 19 -Ն որոշման

## ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

*1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12 /2016թ/*

*2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | 2016թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 196000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 134000 |
| Ծառայության պաշտոններ | | |
| Համայնքային | | |
| Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 134000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 118000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/ | 1 | 101000 |
| Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 100000 |
| Քաղաքացիական աշխատանք | | |
| Գործավար | 1 | 72751 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Օպերատոր | 1 | 90000 |
| Պահակ | 1 | 72751 |
| Հավաքարար | 1 | 72751 |
| Այգեպան | 1 | 80000 |
| Ընդամենը | 1 | 1171253 |

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն/

Հավելված 2
Բուրաստան համայնքի ավագանու
10. 12. 2015թ. թիվ 19 -Ն որոշման

## ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

*1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4 /2016թ/*

*2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | 2016թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Քաղաքացիական աշխատանք | | |
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 77904 |
| Գեղմասվար | 1 | 72751 |
| Գրադարանավար | 1 | 72751 |
| Սպորտ կազմակերպիչ | 1 | 72751 |
| **Ընդամենը** | | 296157 |

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն /

Հավելված 3
Բուրաստան համայնքի ավագանու
10. 12. 2015թ. թիվ 19 -Ն որոշման

<<ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

ԹՎԱՔՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. *Աշխատակիցների թվաքանակը՝ 3 /2016թ/*
2. *Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.*

| *ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ* | *ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ* | *2016Թ. ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀ դրամ/* |
|---|---|---|
| *Տնօրեն* | *1* | *92000* |
| *Դաստիարակ* | *1* | *80000* |
| *Պահակ* | *1* | *77904* |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | *3* | *249904* |

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ/
/ստորագրություն/